

Թիւ 26714
Փետրուար 21, 1980

Արժանաշնորհ
Տ. Մամբրէ ԼՅՆՅ. Գուգուեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Գէյմպրիճ.

Սիրելի Տէր Աթոռքի,

Ստացած ենք Փետրուար 8, 1980 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար Յին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները: Գասցէները եւ հեռագայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՆՅՈԳՈՍ
Առաջնորդ

Անիթա Հէտիսըն
Տանըլտ ճ. Թելլալեան
Չարլզ Նահպետեան
Ճոզէֆ Յարութիւնեան
Պարպըրա Յակոբեան